բայց ոչ է պարտ հիանալ. զի ամենեցուն Տէրն երարձ ի սոցանէ զամենայն որպիսութիւն. ըստ մարգարէութեան Եսայեայ, զոր կու հրամայէ ի բերանոյ Աստուծոյ այսպէս. եթէ, « Երարձ Տէր յիսրայէլէ զգլուխն և զվերջն, զվեծն և զփոքրն ի միում աւուր. այսուհետեւ ժողովուրդն ի գերութիւն վարեցաւ վասն ոչ ճանաչելոյ նոցա զՏէր. և բազում եղեն դիակունք նոցա վասն սովոյ հացի և ծարաւոյ ջրոյ։ Եւ ի վերայ այսր ամենայնի ժողովուրդն ոչ դարձաւ, և զՏէր զօրութեանց ոչ խնդրեցին, մինչեւ վիրաւորեցաւ. վասն այնորիկ ի վերայ երիտասարդաց նոցա ոչ եղիցի ուրախ Աստուած, և այրեաց և որբոց նոցա մի՛ ողորմեսցի, զի չարք են և անօրէնք. և ամենայն բերան խօսի զանիրաւութիւն », և այլն ըստ կարգի։ Ուր և այժմ մարգարէութիւնս կատարեցաւ ի վերայ այսմ երկրի իշխանացս. զի ոչ ունին միաբանութիւն ի միջի իւրեանց, և ոչ պատիւ և ոչ հնազանդութիւն, և ոչ սէրն Աստուծոյ իւրեանց սրտի. վասն որոյ Տէր զօրութեանց կամի եղծանել զերկիրն նոցա, և զինքեանս ընջել ի մեծութենէ և ամբարտաւանութենէ բարձր իշխանութենէ, վասն ծովացեալ մեղաց մերոց։ Զոր Տէր Աստուած տացէ նոցա հոգի զգաստութեան և զօրութեան և իմաստութեան, զի մի՛ առնիցեն անփոյթ զայսպիսի տեսութիւն և զգուշակումն, անհաւատից և ամբարշտաց, զոր ոչ էր եղեալ երբէք նախ քան զայս այսպիսի ինչ՝ զոր այժմ եղեւ։

1576. Թվ. ՌԻԵ. Հանգեաւ առ Աստուած Կամենից քաղաքիս Ֆռանգի եպիսկոպոսն Գէօնդ Տեւուշ Սեցենովքէյ. 13 ամ կալաւ զաթոռ եպիսկոպոսութեան այս վիճակիս. զոր Տէր Աստուած ողորմի հոգւոն. և էր հեզ և խոնարհ ոգի և պարզամիտ և երախտաւոր առ Հայոց ազգիս, միշտ ընդունելով զնոսա, ի սեղանս միշտ հացակից առնելով, և մեծարելով քան զչափն աւելի զեպիսկոպոսն մեր և զքահանայսն։ Թողցէ նմա Տէր զմեղս՝ զկամայն և զակամայ. ամէն։

1577. Հայոց Թվ. ՌԻԵ. Մայիս ամսոյ Ա, օրն երեքշաբթի։ Ի յայսմ ամի ի Լեհից աշխարհս նոր թագաւոր նստաւ, որոյ անուն կոչի Պաթորիյ Ըշտեֆան, որպէս առաջագոյն գրեալ կայ ի այսմ թխտիս՝ զպատմութիւն թագաւորացն, ողորմած հոգոյ Զիկմունտ Ակուստոսի և զվախճանն նմին. և յետ նորա միւս թագաւորին Ֆրանցուսքիյ աշխարհէն, զոր էին բերեալ, անուն նորա Եէնիրիքուս. զոր վասն անհնազանդութեան իշխանացն այսմ երկրի՝ ելաւ, և փախստական գիշերով գնաց յաշխարհն իւր, և այլ ոչ դարձաւ, յաղագս անկարգ և անսահման գնացից սոցայ։ Եւ յետ երկուց ամաց բաղում անկամ ժողովեցան և քննութեամբ ընտրեցին իւրեանց երկրի վերայ զայս վերոյգրեալ թագաւորն, և բերեալ նստուցին ի յաթոռ թագաւորութեան ի քաղաքն թագաւորանիստ ի Գրաքովն. և մայիսի առաջին օրն երեքշաբթի օծեցին, և թագադրեալ պսակեցին ըստ օրինի թագաւորութեան։ — Եւ հանգուցեալ թագաւորիս Ակուստոսին քոյր մի կայր ժառանգ աշխարհիս այս՝ ի բնական հայրենեաց իւրոց, զնա ետուն նմա այս